

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մոլորեցնող մամուչի վտանգաւոր դերը.—Ռուս ճացիռնալիս-անհսկութիւնը.
—Քիչինեւի հրեական շարդը.—նացիռնալիս—անհսկութիս ամենատաքածուած
ուսաց քերի կաշուակեռուրիւնը.—„Հովու Վրեյ“-ի աջողուրիւնը.—
„Ռուսկայ Միսլ“ ամսագրի վաճառման հարցը և երա խիստական խմբագրի
դրուրիւնը.—Թուրքերն լեզուով լոյս տեսնող «Ձարբ» Ռուս քերը.—Կրօնա-
կան եւ մատու կապ.—Միջնակարգ դպրոցների մասին ոռոշում.—նոր լեզու-
ների զրծմական պարապունենք միջնակարգ ուսումնարաններում.—„Կա-
զայ“-ը Մուշի դեպի մասին.—„Պրավիտ. Յետու,“-ը Պետ. իդ. րժ. Թա-
հիսուսի յուզմունքների մասին.—Պ. պ. Ա. Մակրաշեակեալ և Մ. Արամեակի դր-
ւամական նուերները.—„Պրավիտ. Յետ.“ Քիշինեւի անկարգուրիւնների մա-
սին.—Բարձրագոյն հրամաններ.—Կարգադրուրիւններ մամուչի վերաբերեալ.—
Պաշօնից հետացրուած յաղախոլուս.—Նախկին ուսիկանապէ զաֆրովի
դադապարտումը:

Մամուլը հասարակական-քաղաքական կեանքում երկսայրի
սրի դեր է կատարում. մեծ բարիքների նետ նա կարողանում
է և մեծագոյն չարիքների պատճառ լինել. մանաւանդ երբ
հանգամանքները նպաստում են մոլորեցնող մամուլին ծածկուել
«հայրենիքի միակ հարազատ զաւակների» և «ուղղափառ կրօնի
պաշտպանների» գիմակի տակ: Սիստեմատիկաբար կեղծելով
ձշմարտութիւնը, ստեր և զրպարատութիւններ տարածելով ի-
րանց գրական հակառակորդների գէմ, ստութիւն ներշնչելով
գէպի նոյն պետութեան օրէնքների տակ ապրող այլազգիները—
այդ նեղ ազգասէրները կամ չովինիսանները, որ նոյն է թէ նա-
ցիոնալիսանները, բոլոր երկրներում հանդիսանում են յետազի-
մութեան և անարդարութեան ջատագովներ: Աւելի վատանգաւոր
է գառնում նրանց գործունէութիւնը, երբ պետութեան մէջ
գոյութիւն ունեցող կարգերի գորութեամբ հասարակական կար-
ծիքը զեկավարող դեր չէ կատարում և նախաձեռնութիւն չունի
օրէնսդրական-վարչական գործերում: Այդ հանգամանքներում
աւելի գժուար է լինում մաքառել մամուլի վեսարակը ազդե-

ցութիւնների դէմ: Եւ ահա օրէցօր, կաթիլ-կաթիլ թունաւորում են իրանց գրուածքներով անարդարութեան և խաւարի ներկայացուցիչները տգէտ ու նախապաշարուած ամբոխի մտածողութիւնը, աւելի ես խոր կերպով արմատացնելով նրա մէջ հին դարերից մնացած անմիտ նախապաշարմունքները:

Մի այդպիսի ցաւալի միջնադարեան նախապաշարմունք է քրիստոնեանների վերաբերմունքը դէպի հրէանները: Տգէտ ամբոխը ի միջի այլոց հազար ու մի առասպելներ է պատմում այն մասին, թէ հրէանները գողանում են քրիստոնեայ մանուկներին և գրանց արինով բաղարջ պատրաստում... Եւ ահա դանուում են մամուլի դորձիչներ, որոնք տարիններ շարունակ գրգռում են ամբոխը այդ ընդունակ և հայրածուած ցեղի դէմ: Ռուսաւտանի մայրաքաղաքների թերթերից հակածրէական պրոպագանդով հոչակուած են „Նորու Վրեմյա“, „Свѣтъ“ Պետերբուրգում, և „Московскія Вѣдомости“, „Московскій Листокъ“, Մոսկովյայում, ամսագրներից՝ „Русскій Вѣстникъ“ (Վելչկօի): Ցաւարին այն է, որ ձրի ժողովրդական գրադարան-ընթերցաններում թոյլատրուած են հէնց այդ թերթերը... Գաւառական թերթերից թեսարաբիայում ամենատարածուած լրագիրն է „Бессарабеицъ“, որի հրատարակիչ-խմբագիր Կրուշեւանը մի կատաղի հակածրէական է: Այդ պարոնը կարող է իր անձը դասել պ. պ. Սուվորինի, Կոմարովի, Գրինգմուտի և Վելչկօի՝ այդ փառաւոր թիւու աղդասէցների և օտարակերների շարքում:

Հինգ տարի շարունակ իր թերթի մէջ Կրուշեւանը գրրդառում էր ուղղափառներին հրէանների դէմ, և ահա այս տարուայ Զատկական տօներին նա և նրա հետ ամբողջ աշխարհը տեսան այդ զգուշելի պրոպագանդայի սոսկալի հետեանքները:

Միրոյ և հեղութեան Ուսուցիչ Քրիստոսի յարութեան տօները Քիշնեւի հրէանների համար դասան չարչարանքների և ջարդի սոսկալի օրեր. ուղղափառ ուսու ամբոխը մի շարք քստինելի բարբարոսութիւններ կատարեց իր համաքաղաքացի հրէանների զլինին: Ականատեսները պատմում են զարհութելի ֆակտեր:

Զարդից յետոյ Քիշնեւը այնպիսի տեսք էր ստացել, որ կարծես այդ քաղաքը թշնամու աւերութեների լինէր մատնուած. համարեա բոլոր հրէական տներն ու խանութները, թէ քաղաքի կենտրոնում և թէ ծայրերում, քարուքանդ են արուած, աւարառութեան ենթարկուած: Զին խնայել նաև քաղաքից գուրս գտնուած հրէական այգիները և ամառանոցները: Փողոցներն ու կատըները ծածկուած են բարձերից և զօշակներից թափուած փետուրներով: Աւելի մունքի են ենթարկուել հրէական սինագոգ-

ները, ուր մոլեգնած ֆանատիկասները չեն յարգել նոյնիսկ ու գրքերը:

Զարդից վնասուել են զլխաւարապէս աղքատ հրէաները: Վնասը միլիոններով է հաշում: Զարդողները կահկարասիքի կտորներով և մահակներով հարուածներ են եղել հասցնում, բնտրելով անպաշտպան հրէաների խեղճ գլուխները: Սպանուած են հրէաներից 45 հոգի, հիւանդանոցում անյոյ դրութեան մէջ պառկած են 60 հոգի և վիրաւորուած են մի քանի հարիւր: Պատմում են, թէ կատաղած ուղղափառները հրէաներին գցում էին երրորդ յարկից փողոցների սալայատակների վրայ, եղել են և կանանց բռնարարելու դէպքեր...

Երեք օր շարունակ Քիշնեւի փողոցներում շրջում էին ջարդողները, բաժանուելով 10—20 հոգուց բաղկացած խմբերի, որոնց հետեւմ էր հետաքրքրուողների բազմութիւն: Ասում են, որ այդ հանդիսականները, որոնց մէջ և «ինաւելիզենաններ», խրախուսում էին այդ բարբարոսութիւնների հեղինակներին: „Русс. Вѣд.“, С.-Петерб. Вѣд.“ և „Новости“ լրագրների թղթակիցները, ինչպէս և Քիշնեւի քաղաքային Դուման, վկայում են, որ տեղական պոլիցիան իրան շատ թոյլ էր պահում այդ անկարգութիւնների ժամանակ: Դեռ Զատկից երկու շաբաթ առաջ քաղաքում յամառութեամբ լուրեր էին պատում «ջնուգներին ջարդելու» նախապատրաստումների մասին: „Кievliyinie“ թերթը ասում է. «Բոլորովին անհասկանալի են երեսում տեղական իշխանութիւնների անզօրութիւնը և անկարգադիր քարմունքը»: „Русское Слово“-ի ասելով՝ «Քիշնեւի Դուման իր արտակարգ ժողովում միաձայն որոշեց դարձնել ներքին գործոց մինիստրի ուշադրութիւնը տեղական պոլիցիայի թոյլ գործունէութեան վրայ և զօրեղացնել պոլիցիական վերահսկողութիւնը ապագայում»:

Կրուշնեանները այժմ կարող են հրձուել իրանց քարոզների փայլուն հետահանքներով: Ասենք՝ այդ տիպի պարոնները, իրանց ներկայացուցիչ Սուվորինի նման գիտեն ճարպիկ կերպով զուրս պլծնել անախորժ դրութիւններից, թէև ոչ միշտ միատեսակ աջողութեամբ: Այդպէս, Սուվորինի կամակատար Բուլգակովը, որ անցեալ տարուայ վիրջում մի արշաւանք էր սկսել „Новое Время“-ի մէջ բազմաթիւ թերթերի հրատարակիչ Ռամմի դէմ, այժմ լուրջ կերպով մեղադրուամ է ուղղակի կաշառակերութեան մէջ: „Новое Время“-ի խմբագրութեան վրայ մի շարք նման մեղադրանքներ են սկսել տեղալ ամեն կողմից... Այդ լրագրի աշխատակիցներից մէկը, պ, Զերմանը, այժմ հեռացուել է խմբագրութիւնից, որովհետեւ համարձակուել է երեան

հանել պ. խմբագրի արարքները: Բուլղակովը իրան արդարացընելու համար այժմ կեղտ է քառու իր աշխատակիցներից միքանիսի վրայ: Խմբագրութիւնից արտաքսուած Զերմանը իր պատիւը վերականգնելու համար այլ զենք չփ գտել, բացի շուն ծեծելու մտրակից... Եւ մարտի 15-ին „Հովու Վրեմյ“-ի խըմբագրատան առաջ տեղի է ունենում մտրակով մնամարտութիւն, տուրուգմբոց խմբագրի Բուլղակովի ու Զերմանի մէջ...»

Զը նայած այդ բոլոր սկանդալներին, Սուվորինը և իր հետեւողները շարունակում են մեծ աջողութեամբ իրանց նացիոնալիստական—անտիսեմիտական միստիան: Եղուր չէ Ալեքսեյ Սուվորինը իր կեանքի երկար տարիների վորձով մօտից ուսումնասիրել ամբոխի հոգեբանութիւնը, որով աջողութիւնը ամեն ինչ մօռացնել է տալիս. ով է հարցնում, թէ ինչ ճանապարհով ես նիւթական ոյժ ձեռք բերել: Շատ ճարպիկ մարդ է Սուվորինը. դաւասական ուսումնարանի այդ նախկին ուսուցիչը և զանազան թերթերի գաւառական թղթակիցը յնտոյ դառնում է մայրաբաքրի մի տարածուած թերթի սրամիտ ֆելիետոնիստ ու պամֆլետիստ: Իսկ 1876 թւականից ձեռք բերելով «Հովու Վրեմյ»-ն նա թողնում է ե' չափաւոր լիրերալութիւնը ու կամաց-կամաց դառնում հզօր քամիների ուղղութեամբ տատանուող մի եղեգն, որ զիսէ հանգամանքներից և ամբոխի նախապաշար-մունքներից շահուել. թթու ազգասիրութիւնն ու օտարակերու-թիւնը ընդհանրապէս և հականըէականութիւնը մասնաւորա-պէս դառնում են նրա ճարպիկ գրական գեշեֆաների առարկան: Հետևանքը նիւթական կողմից փառաւոր էր. „Հովու Վրեմյ“-ն այժմ ամենատարածուած թերթն է. նա ունի 60 հազար բաժանորդ...»

Երբէք այսպիսի նիւթական աջողութեան ի հարկէ չէր կարող հասնել Վիկտոր Գոլցեւի նման մի հրապարակախոս, չը նայած իր գիտական լուրջ պատրաստութեան (նախկին պը-րոֆիսոն) և լայն մարդասիրական ու աղատասիրական սկըզ-բունքներով տողորուած հրապարակախոսութեան: Նա 20 տարի շարունակ զեկավարել է „Русская Мысль“ ամսագիրը: Այժմ, ինչպէս երեսում է, Վ. Գոլցեւը ստիպուած պէտք է լինի թողնել այն ասպարէզը, որին նա նուիրուած էր իր ամբողջ էութեամբ, մոռանալով հասարակական ծառայութեան մէջ իր անձնական շահերը:

«Նշմարուում է մի գրական աղէտ,—զրում են „С.-Пет. Ե. թերթին Մոսկուայից—ծախւում է „Русская Мысль“ ամսագիրը: Այդ վաճառուումը արդէն ոչ ոքի համար զազտնիք չէ, և գործի շահի տեսակէտից ցանկալի է, որ այդ բանի մասին

որքան կարելի է շատ անձինք իմանսան Ամսագրի հրատարակիչ-խմբագիր Լավրովին, որ վճռել է հրատարակութիւնը ծախել, արդէն արուել են մի քանի լուրջ առաջարկութիւններ, ի միջի այլոց Մոսկովայի մի խումբ ժուրնալիստաների կողմից, որոնք ցանկանում են „Ռուսական Մասլե“-ը հրատարակել պայմանով: Այդ առաջարկութիւնը, ի հարկէ, շատ լաւ է, սակայն հազիւթէ նա ժպտայ նրանց, որոնք զիտեն ամսագրի ներքին կողմը Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ «Պ. Մ.»-ի իրական խմբագիրը Վ. Ա. Գոլցեւն է: Նա վարում էր օրգանը 20 տարի՝ լինելով ամսագրի ներկայացուցիչ նաև մամուլի գործերի զիտաւոր վարչութեան առաջ: „Ռուս. Մասլ.“ թէ իր նիւթեական և թէ լարոյական աջողութեամբ ամբողջապէս պարտական է Վ. Ա. Գոլցեւն, որ կարողացաւ ամսագրի շուրջը միջնորդ ստեղծել: Ի հարկէ, ամսագրի ուրիշի ձեռք անցնելը կարող է խմբագրութիւնից Գոլցեւի հեռանալու պատճառ լինել: Ասում են, թէ «նախազգալով այդպիսի հետևանք», Վ. Ա. Գոլցեւը երդուեալ հաւատարմատար է գրուել: Պէտք է ցանկալ, որ այդ լուրերը չ'արդարանան, և որ ամսադիրը մեար նրա ձեռքում, ով իրապէս նրան ստեղծեց և զրոշանոց վարձատրութեամբ՝ բառացի հասկացողութեամբ՝ առանց կրացած մէջը ուղղելու՝ աշխատելով, դրեց այդ ամսագիրը մամուլի շիտակ օրգանի պատուանդանի վրայ:

Բնականարար, ներկայ հասարակական պայմաններում գրական գործիչները, նոյնիսկ ոռոսական կեսնկուում, կատարելով այնպիսի մաշող և պատասխանատու աշխատանք, ինչպիսի, է իրական խմբագրի պաշտօնը, չի կարող յոյս ունենալ այնպիսի նիւթեական ապահովութիւն ձեռք բերելու վրայ, ինչպէս հեշտութեամբ այդ իրագործուում է ոռոս գեղարուեատական խոշոր տաղանդների կեանքում, — բայց և այնուամենայնիւ սարսափելի ապերախտութիւն կը լինի, եթէ իսկապէս ստիպուած լինի գրական ասպարիգում իր երիտասարդ աւիւնը սպառած մարտնչողը իր կեանքի վերջալուափ մօտ լոկ հացի խնդրի համար, աշխատել ոչ իր ձգտումներին համապատասխան ասպարիգում: Ցաւալի իրականութիւն, որ Սուվորիններին զարձնում է միլիոնատէր, իսկ Գոլցեւներին ընդ միշտ թողնում է բնակելիկիցնատ սրբութարի գերում...

Այդպիսի հետանկար միշտ պէտք է աչքի առաջ ունենայ հասարակական գործիչը և մեղանում... Բնականարար աւելի և ծանր պէտք է լինի մամուլի աշխատաւորների վիճակը մեղանից անդամ կուլտուրապէս ստոր թուրքերի մէջ: Այդ երեխ լաւ գիտէ թիվիսում մարտի 30-ից լոյս տեսնող թուրքական «Շարքի-Ռուս» թերթի հրատարակիչ-խմբագիր Մոհամեդ Շախ-

տախտինսկին, որ որոշ անուն ունի և իբրև տեղական ոռութերթի աշխատակից։ Խօսել այն մեծ կուլտուրական նշանակութեան մասին, որ պէտք է ունենայ այդ միակ թուրքական լըրագիրը թէ թուրքերի մտաւոր առաջազդիմութիւն և թէ առհասարակ ամբողջ Սնդրկովկասի համար, որի ազգաբնակութեան ամենաստուար, միենոյն ժամանակ և ամենափառար մասը թուրքն է—նշանակում է կրկնել մի անվիճելի հյումարտութիւն։

Մեզ հարեան թուրքերը մինչև այժմ իրար հետ կապուած էին կրօնական նեղ կապերով, այժմ աւելանում է նրանց կեանքում և մի նոր մտաւոր գործօն, որ ունի յատկութիւն ընդարձակելու նեղ կրօնական կապը, դարձնելով նրան միջազգային, համապետական և համաշխարհային։ մամուլն է, որ իրարից կորուած նեղ ազգային—կրօնական լճակները միացնում է իրար հետ և դարձնում համամարդկային կեանքի ովկիանոս, մինչդեռ ամեն կողմից կարուած, լոկ իր կեանքով ապլուղ լճակը հեշտութեամբ նեխուում է և դառնում ճահիճ, այդ վտանգից ազատում է նրան շխակ ուղղութիւն և լայն հորիզոններ ունեցող մամուլը, որ ընդունակ է միացնել առանձին լճակները և նեխուումից ազատ պահել դրանց նաև անհատական կեանքը...

I. U.

25 ապր.

«Правительств. Въестникъ»-ում հրատարակուած են ժողովրդական լուսաւորութեան մինիստրին Բարձրագոյն տուած հրահանգները, որոնք պէտք է հիմք ծառայեն միջնակարգ դրայրոցի վերակազմութեան վերաբերեալ օրէնսդրական աշխատանքների համար։ 1) Գիմնազիաները պահպանում են ութաւարանեան կազմը։ Նրանց մէջ աւանդուում են երկու հին լեզուներն ես, բայց յունարէնի դասաւանդութիւնը նրանցից շատերի մէջ անարարագիր կը լինի։ Գիմնազիական դասընթաքը իւրացուամբ արտօնութիւն է տալիս մտնելու համալարանները։ 2) Շալական գալոցները, որոնց ուսման ծրագիրը պէտք է ենթարկուի վերաբնութեան, պահում են իրանց վեց հիմնական և հօթներորդ լրացուցիչ դասարանները։ Այս վերջին դասարանը աւարտելը իրաւունք է տալիս մտնելու բարձրագոյն տեխնիկական ուսումնարանները։ 3) Բացի գիմնազիաներից և լէշալական ուսումնարաններից՝ կը կազմակերպուեն ուրիշ միջնակարգ գալոցներ ամբողջացրած հանրակրթական ուսման ծրագրով բաղկացած վեց դասարաններից։ Այս ուսումնարաններում ուսման աւարտուամբ իրաւունք է տալիս ծառայութեան մտնե-